ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2015թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ոստիկանության հարգելի աշխատակիցներ.

Ընդունեք իմ շնորհավորանքներն ու ջերմ բարեմաղթանքները Ձեր մասնագիտական տոնի՝ Ոստիկանության օրվա կապակցությամբ:

Ոստիկանի դժվարին մասնագիտությունը կոչված է ապահովելու իրավական պետության ամենակարևոր սկզբունքները՝ պաշտպանելու մեր բնակիչների իրավունքները, հասարակական կարգն ու հասարակության անվտանգությունը:

Համոզված եմ, որ Դուք սկզբունքայնությամբ ու մասնագիտական բարձր պատրաստվածությամբ կիրականացնեք Ձեր առաքելությունը:

Կրկին շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթում եմ մարզային ոստիկանության բոլոր աշխատակիցներին, վետերաններին քաջառողջություն, ընտանեկան երջանկություն և հաջողություններ:

Հարգանքով՝

ՖԵԼԻՔՍ ՅՈՒԼԱԿՅԱՆ